

ԳՅԱԿԱՆ-ԲԼԵՌԱՄԻՐԱԿԱՆ

ՌԱՅԹՅՈՒՆԵՐԸ

Յ.

25 փետրվարի 1881 ամ. Թիֆլիզ.

Թանգարին Բարեկամ

Մ. Կ. Փանեանց,

Զեր 24 դեկտեմբերից գրած նամակը վաղուց արդէն ստացած եմ. այսքան ժամանակ պատասխանի ուշացնելը պէտք է վերաբերել իմ ծոյլութեանը, և աւելի ոչինչ. Այս նամակով կստանաք իմ լուսանկարը, իսկ ալ. Արձրունին ինքը կուղարկէ Զեղ իր պատկերը, որպէս խնդրած էիք:

«Կայծերի» Մոսկվայում տպագրելու դիտաւորութիւնս ես արդէն թողած եմ: Ինձ ստիլեց այդ մտքին դիմելու անցեալ տարվայ ցենզուրայի խստութիւնը, իսկ այժմ այստեղի ցենզուրան փոքր ինչ մեղմացել է, այլ ես այնպիսի բռնութեամբ չէ վարվում դէպի ամեն մի գրուածք, «ր կարող էր Տաճկահայերի մէջ ազատասիրութեան զգացմունք զարթեցնել: Ես կը տպագրեմ «Կայծերը» Թիֆլիսում, և գուցէ շուտով կը սկսեմ տպագրութիւնը, եթէ ծախքը բոլորովին լրացրած կը լինեմ:

Պ. Նիկողոսեանը¹⁾, որպէս Զեղ յայտնի է, Կ. Պօլսումն է. նա աշխատակցում է Ռուսաց «Պօրյուկ» լրագրին. և ինչպէս իր մասնաւոր նամակներից երեսում է, կարող է այնտեղ շատ օգտաւէտ լինել մեր բուն ազգային գործերում: Ես բոլորովին համաձայն եմ Զեղ հետ ալ. Նիկողոսեանի բնաւորութեան մասին, արդարե, նա փոքր ինչ դիւրագրգիռ, շուտ յափշտակվող երիտասարդ է, բայց այնուամենայնիւ, մեր անկեղծ, անձնուէր և եռանդով գործիչներից մէկը պէտք է համարել նրան: Բայց նա չափանց անձնավստահ մարդ է, — այդ է նրա դլխաւոր թերութիւնը:

«Խենթի» տպագրութիւնը այնքան վատ չի լինի, որքան Դուք կարծում էք. առաջին տպագրված թերթերի օրինակները ուղարկել էին ինձ, բաւական մաքուր էին. միայն շատ ուշացըին, պէտք էր մինչև այսօր լոյս տեսած լինէր:

«Խաւիթ-Բէկը» Մշակի մէջ հրապարակելով, միևնոյն ժամանակ առանձին գրքով տպւում է ինձ համար. երբ կը վերջանայ, քանի օրինակ որ կը ցանկանաք, կուղարկեմ Զեղ:

Դուք, ի հարկէ, կարդացած կը լինէք «Խենթի» տպագրողով

1) Խօսքը ու. Դր. Նիկողոսեանի մասին է. Յ. Տ. Յակ.

թողուածը Մոսկվայի ու Ս. Պետերբուրգի եկեղեցիների երեցփոխութեան մասին. եթէ Զեր ժամանակը կը ներէր, ես շատ կը ցանկանայի, որ բուն խնդրի մանրամասնութիւնները զրէիք ինձ, թէ ինչումն է կայանում բուն վիճարանութիւնը, կամ ովքեր են հակառակ կողմի պարագլուխները. ինչ է նրանց նպատակը:

Քանի շաբաթ առաջ այստեղից անցաւ մեր հայրենակից մահացեսի Ախմոն Թումանեանցը, նրանից Զեր առողջութեան մասին տեղեկանալով, շատ ուրախ եղայ:

Այս տարի, եթէ կը յաջողվի, նպատակ ունեմ դէպի Կ. Պոլիս մի ճանապարհորդութիւն անել և Հայաստանով վերադառնալ Թիֆլիս. անցեալ տարի չյաջողվեցաւ, գուցէ այս տարի կը հասնեմ ցանկալի նպատակիս:

Ընդունեցէք իմ խորին յարդանքը

Յ. Մելիք Յակոբեան.

4.

Խանգագին բարեկամ

Մ. Կ. Փանեանց,

Ապրիլի 7-ից զըստ Զեր նամակը ստացայ, խոստացել էիք Զեր պատկերը ուղարկել, մինչեւ այժմ սպասել էք տալիս ինձ «Խենթի» մէկ օրինակ ուղարկեցի Զեր, չգիտեմ, ինչպէս կը հաւանէք տպագրութիւնը. Շուշի քաղաքից դրանից աւել չէր կարելի սպասել: «Դաւիթ-Բէկի» առաջին և երկրորդ մասը արդէն առանձին գրքով տպվածէ և վերջացած է. կազմարարի մօտ է գտնվում. շուտով մի օրինակ կուղարկեմ Զեր: Իսկ երրորդ մասը, որ աւելի ընդարձակ է, լոյս կը տեսնի «Մշակի» մէջ հրապարակութիւնը աւարտվելուց յետոյ, որովհետեւ առաջ նրա մէջ տպվում է, յետոյ բրօշիւր է կազմվում:

Մոսկվայի ուսանողներից մէկը նամակով դիմել էր իմ բարեկամ պ. Գարբիէլ Միրզօեանցին, յայտնելով, թէ տեղիդ անկելանոցի գրամարկում կայ մի գումար և հոգաբարձութիւնը ցանկութիւն ունի այդ գումարը մի որևիցէ ազգային զործի համար ծախսել, և իբր թէ հոգաբարձական ժողովում հարց է ծագել, որ յիշեալ գումարը տան ինձ տաճկական Հայաստանում ճանապարհորդելու համար, և հարցը մնացել է դեռ անվճիռ, որովհետեւ չգիտեն, ես յանձն կառնեմ գնալ Հայաստան թէ ոչ—իմ դիտաւորութիւնը դիտնալու համար զրած էին պ. Միրզօեանցին, որ ինձանից հարցմունք անէ:

Ես դեռ անցեալ տարի, Յունիս ամսի սկզբին պատրաստվեցայ Կ. Պոլիս գնալու, որ այնտեղից անցնեմ Հայաստան, բայց մի

քանի արգելքներ, որոնց մէջ զլխաւոր տեղը բռնում էր նիւթական միջոցների պակասութիւնը, թողեցին իմ ցանկութիւնը անկատար: Այժմ, եթէ իրաւ, կայ մի զումար, որ կամենում են Հայաստանի ճանապարհորդութեան համար գործ դնել, ևս մեծ ուրախութեամբ յանձն կառնեմ այդ ճանապարհորդութիւնը, հետեւեալ պայմաններով.—առաջին, իմ ճանապարհորդութիւնը կը տեէ հինգ ամիս: այդ հինգ ամսվայ համար ծախք կը պահանջեմ հազար բռւրլի, երկրորդ, որ ամենազլիսաւորն է, չի պիտի տարածայնվի, թէ ես գնում եմ Հայաստան: Ես պիտի աշխատեմ, որքան կարելի է, իմ ճանապարհորդութիւնը գաղտնի պահել: Պատճառները, առանց իմ ասելու, Դուք կը հասկանաք: Զեզ յայտնի է, թէ ինչ հալածանք կայ Տաճկաստանում այն անձանց գէմ, որոնք աշխատում են Հայոց գործի համար: Եթէ իմ Հայաստան գնալը հէնց սկզբից հոչակվի, անկարելի է, որ թիւրքաց կառավարութիւնը ուշադրութիւն չը դարձնի: Թիֆլիզի տաճկաց կոնսուլը ամենաշնչին երեսյթներն անգամ հաղորդում է իր կառավարութեանը, ուր մնաց մի փոքր իշտէ յայտնի մարդու ճանապարհորդելու նպատակով՝ Հայաստան գնալը: Թէև իմ ճանապարհորդութիւնը ոչինչ քաղաքական նպատակ չունի և չի պիտի ունենայ, այնուամենայնիւ, թիւրքաց կառավարութիւնը շատ պատճառներ ունի կասկածանքով վերաբերվել դէպի մի ճանապարհորդ, որ Ռուսաստանից գնացել է Հայաստան: Այդ կարող էր ոչ միայն իմ անձը վտանգի հնիւարկել, այլ զրկել ինձ այն հետազօտութիւններից, որոնք միայն ուսումնական բնաւորութիւն ունեն, և վերաբերում են երկրի ուրնակիչների դրութեանը, նըանց վոխադարձ յարաբերութիւններին և այլն:

Բայց որպէս զի հնար լինի աւելի խորը թափանցել ժողովրդի մէջ, որա համար հարկաւոր են իմ վերև յիշած պայմանները, այսինքն՝ ճանապարհորդել ծալտեալ կերպով (ԱՅԿՈՂՆԻՕ):

Իմ կարծիքս այս է. եթէ տեղւոյդ հոգաբարձութիւնը կը նդունէ իմ առաջարկած պայմանները, թող 1000 բռւրլի բոլորովին ուրիշ անունով ուղարկէ «Մշակի» խմբագրատանը պ. Արծրունուն, պ. Արծրունին այդ գումարը կը կարգադրէ իմ ճանապարհորդութեան համար: Այդ կարող են զիտենալ Մոսվայում մի քանի խոհեմ անձինք միայն, իսկ մնացեալ հասարակութեանը պէտք է անյայտ մնայ:

Յուսովի եմ, որ այդ մասին անյապաղ կը պատասխանէք ինձ, որ ես նրա համեմատ իմ գործերը կարգի դնեմ:

ԳԵՐ Յ. ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ

26 Մայիսի 1881 ամ.

ԹԻՖԼԻՍԻ

5.

27 Յունիսի 1881 ամ. Թիֆլիս.

Աղնիւ բարեկամ

Մ. Ի. Փանեանց,

Զեր 17 և 18 Յունիսի նամակները ստացել եմ. այլ և ստացայ Զեր պատուական ընծան՝ «Հասպարակախօս ձայն» կոչված գիրքը. այդ մասին ընդունեցէք իմ խորին շնորհակալութիւնը:

«Կասպարեան անկելանոցից» ես ոչինչ ակնկալութիւն չունեի. Այդ մասին խօսել էին. կարգադրել էին ուրիշները, առանց նախապէս իմ հաճութիւնը հարցնելու: Թող անկելանոցի մարդիկը անկելանոցի վրայ մտածեն... մենք աւելի կենդանի հիմնարկութիւններից կը սպասենք մեր նպատակների իրավործումը:

Ստացայ Զեղանից բան եւ նինգ ռուբլի. որի փոխարէն պահանջում էք ուղարկել Զեզ 10 օրինակ «Դաւիթ Բէկ» վէպից. Դուք, երեխ, հառուի մէջ սխալվել էք, 10 օրինակ «Դաւիթ-Բէկը» կարժէ 15 րուբլի և ոչ աւելի: Ես փոստով ուղարկեցի Զեզ 40 հատ «Դաւիթ Բէկ», որ նեղութիւն յանձն առնէք Մոսկվայում վաճառելու, և Զեղանից ստացած բան եւ նինգ րուբլին գրեցի այդ գրքերի հաշուին:

«Խենթի» տպագրութեանը և գրքի դիրքին ես էլ չեմ հաւանում. գուցէ շուտով երկրորդ տպագրութիւնը կը լինի, որովհետեւ առաջինը արդէն սպասվել է:

Ընդունեցէք իմ խորին յարգանքը

Յ. Մելիք-Յակոբեանց.

6.

2 Յունվարի 1882 ամ. Թիֆլիս:

Մեծապատիւ պարոն

Մելքոն Կասպարիչ Փանեանց,

Բաւական ժամանակ է, որ մեր միմեանց հետ ունեցած թըղթակցութիւնը ընդհատված է. իմ կողմից մի այլ պատճառ չը կայ, բացի նրանից, որ աւելի. քան երեք ամիս Թիֆլիսից բացակայէի գտնվում, գնացել էի ճանապարհորդութիւններ անելու: Իսկ Դուք ինչ պատճառով զրկում էք մեզ Զեր նամակներից, — այդ պահանջը սաստիկ գրաւում է ինձ:

«Դաւիթ-Բէկ» դարձեալ սկսվեցաւ տպվել և ներկայ տարվայ Յունվար ամսի վերջում կաւարտվի երրորդ գրքի տպագրութիւնը,

միևնոյն դիրքով, որպէս լոյս տեսաւ այդ վէպի առաջին և երկրորդ դիրքը միասին. Կը մնայ մի հատոր ևս հրատարակելու և այդ վէպը բոլորովին կը վերջանայ, որովհետեւ ամբողջ վէպը չորս գրքերից է բաղկացած:

Չը գիտեմ, Չեզ աւզարկված հատորները վաճառվեցան, թէ ոչ: Երեսակացեցէք, ես այդ գրքից միայն 600 օրինակ եմ տպել տուել, և մեր բոլոր հայարնակ քաղաքներում փոքր իշտէ ուղարկել եմ, բայց դեռ ոչ մի տեղից փող չեմ ստացել: Խոկ գրվասնական դարսակ նամակներ շատ եմ ստանում, թէ հետաքրքրութեամբ կարդում են, անհամբերութեամբ սպասում են միւս հատորների լոյս տեսնելուն և այլն... Բայց միւս հատորները ի՞նչ միջոցներով պիտի լոյս տեսնեն,—զբա վրա ոչ ոք չէ մտածում:

Մենք մեր հատարակութիւնից շատ բան չենք սկսանջում, միայն մեր աշխատութեան զինը մեզ տան, որ կարողանանք շարունակել մեր գործունէութիւնը. հակառակ դէպքում, կը մնայ մեզ թողնել գրական ասպարէզը, գոնէ հանդիստ խղճմտանքով կարող ենք ասել՝ մենք կատարեցինք, որքան մեզանից կախված էր, իսկ Դուք մեզ գնահատել չը կարողացաք:

Ընդունեցէք իմ խորին յարգանքը.

Յ. ՄԵԼԻՔ-ՅԱՀՈԲԵԱՆ.

7.

20 Մարտի 1882 ամ. Թիֆլիս:

Յարգելի բարեկամ,

Ստացայ Չեր 13 Մարտի նամակը. ոլ. Նիկողոսեանցի մասին ինչ որ դրած էք, կաշխատեմ կատարումը տալ*:

... Մոսկվայում բնակվում է Սարգիս Յարութիւնեան թումանեանցի ընտանիքը. Նրա որդի Վարդանը, որ տեղային ըէտական դպրոցի ուսանող է, մի ժամանակ թաւրիզում իմ աշակերտն է եղել: Այդ ընտանիքի հետ ես լաւ բարեկամ եմ. մանաւանդ մահտեսի Սիմոնը, որ իր եղբայրների մէջ ամենազարգացածն է, իմ մտերիմներից մէկն է: Քանի օր առաջ Վարդանից մի նամակ ստացայ, որով յայտնում է, թէ դիտաւորութիւն ունի

* Պ. Գր. Նիկողոսեանցին վերաբերեալ իռորները թէ' այս և թէ' միւս նամակներում բաց ենք թողնում:

առանձին զրբերով տպագրել տալու իմ բոլոր այն աշխատութիւնները, որոնք զանազան ժամանակ «Մշակի» մէջ հրատարված են, բայց տակաւին լոյս չեն տեսած առանձին զրբերով։ Ակզրից նա ընտրում է տպագրութեան համար իմ «Զէլալէղդին» անունով վէպիկը։ և իր նամակով թոյտութիւն է խնդրում, որ ես տամ իմ համաձայնութիւնը։

Ինձ, իրաւն ասեմ, շատ ուրախացրեց վարդանի ցանկութիւնը, որ իր պատանի հասակում ցոյց է տալիս այսպիսի ազնիւ ձգտութիւններ։ Բայց որովհետեւ նա զեռ անփորձ է, և նրա հայրը այն մարդկանցից չէ, որ հասկանայ տպագրական պայմանները, այդ պատճառով ես հարկաւոր համարեցի դիմել Ձեզ, որ Դուք նեղութիւն յանձն առնեք խօսելու նրանց հետ իմ կողմից ինչ որ հարկն է։ Յուսով եմ, որ չէք զանայ կատարելու իմ խնդիրը։

Դուցէ նրանց յայտնի չը լինի, երբ առանձին մարդիկ յանձն են առնում տպագրելու մի որ և իցէ հեղինակի զրբերը, նախ վարձատրում են հեղինակին տպագրելու իրաւունք ստանալու համար։ Երբ «Էնենթը» Շուշիում տպեցին, սլ. Ապրեսեանցը ուղարկեց ինձ 300 օրինակ տպված զրբերից, որպէս վարձատրութիւն։ աւելի տալ չէր կարող, որովհետեւ մի աղքատ տղայ էր։

Ես վարդանին պատասխանեցի, թէ յօժար եմ, որ նա տպել տայ «Զէլալէղդինը», բայց ոլոյմանների մասին ոլէտք է խօսէ Ձեզ հետ։ Դրանք են իմ ոլոյմանները։

1. Իրաւունք եմ տալիս միայն առաջին տպագրութեան համար, և տպել ոչ աւելի, քան 2400 օրինակ։ Երկրորդ կամ ապագայ տպագրութիւնների իրաւունքը ինձ վրա եմ ոլահում։

2. Որպէս վարձատրութիւն ոլէտք է ինձ կանխիկ վճարեն կամ 200 ըուրլ փող, կամ 500 օրինակ տպված զրբերից, այն պայմանով, որ իրանք թիֆլիսում իրաւունք չունենան վաճառելու, որպէս զի իմ ունեցածք այստեղ վաճառի։

Ահա դրանք են իմ զլիաւոր պայմանները, իսկ ինչ որ կը վերաբերի տպագրութեան մաքրութեանը, թղթի լաւութեանը, զրբի դիրքի գեղեցկութեանը։—այդ բաների մէջ ես կարծում եմ, որ Դուք այնքան կիրթ ճաշակ ունեք, որ ըուրը կարող էք ցոյց տալ նրանց։

Եթէ զիրքը կը տպվի այնպիսի թղթի վրա, որպէսէր Գամառ Քաթիպայի երգարանի թուղթը, ամենայն վստահութեամբ կարելի է իւրաքանչիւր զրբոյկին 50 կոպէկ զին նշանակել և մեծ դիւրութեամբ կը վաճառի։ Պ. Պատկանեանը, կարծեմ, 300 ըուրլ ստացաւ իր երգարանի տպագրվելուն իրաւունք տալու համար, այն ես իր պատկերով։

«Զէլալէղդինը» իմ աշխատութիւններից ամենազեղեցիկն է։

մի ժամանակ մի քանի պարոններ դիտաւորութիւն ունէին այդ վեպիկը մի քանի հազար օրինակներով տպել տալ և ձրի բաժանել, մանաւանդ Տաճկաստանի հայերի մէջ, Բայց մեր մէջ որպէս ամեն օգտաւէտ դիտաւորութիւն մնում է անկատար, այդ ևս այնպէս մնաց:

Մի քանի շարաթ առաջ պ. Նիկողոսեանի միջնորդութեամբ կ. Պօլսից դիմեց ինձ մի պարոն, որը տեղային լեզուագէտ և բարձր ուսում ստացած երիտասարդներից մէկն է, Թէրզիեան ազգանունով, նա «Խենթը» և «Զէլալէղդինը» Փրանսերէն լեզուով թարգմանելու թոյլտութիւն էր խնդրում. ևս, ի հարկէ, մեծ յօժարութիւններով իմ համաձայնութիւնը յայտնեցի. Պարոնի դիտաւորութիւնը այն է, որ իր թարգմանութիւններով եւրոպական հասարակութիւնը ծանօթացնէ մեր զրականութեան և մեր ներքին կեանքի հետ:

Դօքտօր Թամամշեանը, որ կ. Պօլսի ուսաց դեսպանատան բժիշկն է, զրած էր ինձ, որ իր առաջարկութեամբ «Խենթից» դրամա է կողմէի և դիտաւորութիւն ունի Փրանսերէն և անգլիերէն լեզուներով թարգմանել տալու, որպէս զի Եւրոպայի մի քանի նշանաւոր քաղաքներում ներկայացվի:

Թէև մի կողմից միութարութիւն չունենք, այսքանը գոնէ բաւական քաջալերում է մեղ, երբ տեսնում ենք, որ մեր աշխատութիւնները ապարդիւն չեն մնում:

Չեր 8. ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ.

8.

9 Մայիսի 1882 ամ. Թիֆլիս,

Յարդելի բարեկամ

Մելքոն Գասպարիչ.

Ապրել 13-ից զրկած Չեր նամակը ստացած եմ. հազորդում էք. թէ երիտասարդ Թումանեանը համաձայն է իմ պայմանների հետ «Զէլալէղդինի» տպագրութեան մասին. միայն «Մշակի» այն համարները չունի, որոնց մէջ ապկած է եղել այդ վեպիկը. Եթէ արդելքը դրա վրա է, ևս կուղարկեմ կամ Չեզ կամ նրան յիշեալ համարները:

Դարձեալ յայտնում էք Չեր նամակի մէջ, թէ երիտասարդ Թումանեանը ցանկութիւն ունի և «կայձերը» տպագրելու. «Մշակի» մէջ հրատարակած իմ նամակից Դուք արդէն տեղեկացած եք լինէք, որ ես ինքս պատրաստվում եմ «կայձերը» տպագրելու. Մախքի

համար 500 բուրլ արդեն ունեմ, միացածք մի կերպ կը տնօրինեմ։ Եթէ ոլ. Թումանեանցի հայրը նրան այնքան միջոցներ կը տայ։ որ նա կարող լինի «կայծերի» նման մի զիբք տպագրել, որի համար սմենափոքրը 1500 բուրլ ծախը է հարկաւոր, — այդ դէսքում ևս նրան խորհուրդ կը տամ մի քան անել, փոխանակ միայն «Զէլալէդդինը» մի զրքոյկով հրատարակելու, նա աւելի լաւ կանչը, և աւելի նպատակայարմար կը լինէր, եթէ ի մի հաւաքէր իմ մի քանի փոքրիկ վէպիկները և բոլորը միասին մի զբքով հրատարակեր։ Չեզ յայտնի է, որ սկսեալ «Մշակի» առաջին տարիներից, այդ լրագրի մէջ տպինը ևն իմ զանազան վէպիկները կամ փոքրիկ պատկերները։ Այդ բոլորը այժմ մոռացված են, բայց ժողովրդի ընթերցանութեան համար մեծ նշանակութիւն ունեն։ Մի քանիսը այդ աշխատառթիւններից թարգմանվեցան զերմաներէն և սուսերէն լեզուներով և տպվեցան զանազան պարբերական հրատարակութիւնների մէջ։ Բէ այստեղ և թէ Բերլինում։

Կարելի էր բնարել այդ վիպակներից մի քանիսը և «Զէլալէդդինի» հետ միասին տպել. ան ժամանակ զիբքը մի խոշոր զիբք կը ստանար և կը լինէր մի հաւաքածու զոնէ իմ աշխատառթիւնների մի մասի։

Թումանեան եղբայրները հարուստ և բարի մարդիկ են, եթէ կամենում են Հայոց զրականութեանը որ հիցէ կերպով նպաստել, ալէսք է այնպիսի զործ կատարեն, որ իրանց անուանը արժանի լինի և պատիւ քերէ։

Ես կարծում եմ, որ Դուք ևս համաձայն կը լինէք ինձ հետ, որ մի այդպիսի ձեռնարկութիւն աւելի նպատակայարմար կը լինէր, Թիֆլիսի տպագրական ընկերութիւնը հրատարակեց ալ. Պատեկանեանի երդերի հաւաքածուն. ալ. Թումանեանները նոյնպէս կարող են հրատարակել իմ վէպիկների հաւաքածուն, և այդ զործի մէջ նրանք բնաւ կորուստ չեն ունենայ, որովհետեւ ընթերցանութեան զրքերը այժմ, թէև զանդաղ կերպով, այնուամենայնիւ վաճառվում են։

Եթէ կը համաձայնին, ևս կուղարկեմ «Մշակի» բոլոր այն համարները, որոնց մէջ տպված են այդ վէպիկներից, իսկ եթէ ոչ, թող միայն «Զէլալէդդինը» տպեն, որպէս ցանկանում են։

*Արձականդիր՝ խմբագրատանը ոչինչ չեմ յայտնել, որովհետեւ մոռացել էի, այսօր կը զնամ. կը խօսեմ։

Ընդունեցէք իմ խորին յարդանքը,

Յ. Մելիք-Ցակոբեան

Զգիտեմ, ստացաք մի օրինակ «Դաւիթը Տէկի» III զրքից թէ ոչ։

9.

4 Օդոստոսի. 1882 ամ. Թիֆլիս.

Աղնիւ բարեկամ Մելքոն Եպապարիչ.

Այսօր փօստայով ուղարկեցի Զեզ «Մշակի» 10 համարներ, որոնց մէջ կը զանեք այն վէպիկները, որ խօստացել էի Զեզ ուղարկելու։ Այսքան ժամանակ ուշացնելու պատճառն այն էր, ուղիղն առած, ինձ չառ հանելի չէր մի տեսակ տակարական հաշիւների մէջ մանել ալ, թումանեանների հետ երիտասարդ թումաննեանցը գուցէ աղնիւ ձգտութիւնը ունի, բայց նրա հայրը... չը դիտեմ ինչպէս կը վերաբերվէր զէպի որդու ձեռնարկութիւնը։ Այդ պատճառվ չէր ցանկանում Զեզ մի ձանձրալի զործի միջնորդ զարձնել։

«Լիրջապէս, եթէ կը ցանկանան, թող նոր ուղարկած վէպիկները աջելալդղինի» հետ միասին առանձին զրքով տպել տան, եթէ ոչ, թող մնա, Դաք առանձին ուշադրութիւն մի դարձրէք։ Պայմանները կը լինեն միենոյնը, որպէս սկզբից դրած էի, թէ և ալ, թումաննեանների հարստութեան մէջ չառ զդայի չէր լինի, եթէ մի զիրք հեղինակի օդտին տպագրել առալու լինէին։ Բայց այսպիսի բարերարութիւն ևս իմ հայրենակիցների կողմից չեմ սպասում...

«Մշակի» մէջ կարդացած կը լինէք այն լուրը, որ սլոլկօվնիկ լինիք-Հայկազեանը յանձն է առել «Դաւիթ Բէկի» բոլոր հատորները իր ծախքով նորից տպագրել տալու։ Դա մի զովելի օրինակ է, մանաւանդ մի զինուորականի կողմից։ Ետ ցանկանում է, որ այդ նոր տպագրութիւնը պատկերազարդ լինի և խիստ չքեզ, Պատկերները այսուղի կը նկարվեն, իսկ վորագրութեան համար կուղարկվեն կամ Մոսկվա կամ Ա. Պետերբուրգ։ Ահազին ծախք կը լինի, բայց նա բոլորը նուիրում է յօդուտ հեղինակի։

«Էյտմասայի մէլուքութիւնների» պատմութիւնը վերջացաւ, 1200 օրինակ առանձին զրքով տպված է, բայց այժմ ցենզորի հետ մեծ վէճ առնենք, թոյլ չէ տալիս, որ զրքերը գուրօ գան. տանլով, թէ նորից սլետը է քննվին. որովհետեւ զրքի մէջ չառ ազտու մտքեր անց են կացել։ Զը նոյյելով, որ «Մշակի» մէջ տորթելու ժամանակ ինքը թոյլ է տուել, այժմ կրկին վիճարանութիւններ է յարուղանում։ Զը զիտեմ, ինչով կը վերջանայ, եթէ նորից քննելու լինեն, զիրքը սուրովին կը կորցնէ իր նշանակութիւնը. թէ և սկզբից «Մշակի» մէջ տպվելու ժամանակ չառ կտորներ են հանել նրա միջից և երբեմն ամբողջ զլուխներ ջնջել են։

Ընդունեցելք իմ խորին յարդանքը

Յ. Մելիք-Յակոբեան

10.

7 Հոկտեմբ. 1882 ամ. Թիֆլիս.

Յարդելի քարեկամ

Մելքոն Կասպարիչ:

Իմ վերջին նամակի, պատասխանը գեռ չեմ ստացել Զեղանից, Պարոն Ամբատ Շահազիզեանից մի քանի տեղեկութիւններ էի սկանչած, ևթէ պատահելու լինէք, յիշեցրէք, որ շտագէ պատասխաննել. Տեղեկութիւնները այժմ «Մշակի» մէջ տպվող «Դարարաղի Աստղագէտը» վէտի հեղինակի մասին էր, մինչեւ տպագրութեան վերջանալը, հարկաւոր է ալ. Շահազիզեանից պատասխան ստանալ:

«Կայձերը» տպվում է, յոյս ունեմ, որ մինչեւ ներկայ ամսի վերջը առաջին հատորի տպագրութիւնը վերջանայ: Չեր ստորագրել առւած բաժանորդների թուի համեմատ նոյնքան օրինակներ կուղարկեմ Զեզ: «Կայձերը» տպվում է մի բարերարի հաշուով, որի անունը յետոյ կը յայտնեմ:

Չը գիտեմ, ալ. թումանեանները դեռ ես ցանկանում են «Զելլալէդդինը» և միւս վէպիկները տպագրել տալ, թէ ասեցին և այնպէս էլ շուտ մոռացան: Այդ հարցմունքը նրա համար է, որ մի քանի երիտասարդներ ցանկանում են «Զելլալէդդինը» այստեղ տպել տալ և մի քանի հազար օրինակներով ձրի տարածել, մանաւանդ Տաճկաստանի հայերի մէջ, նրանց թմրած զգացմունքները զարթեցնելու համար: Բայց ես այդ պարոններին դեռ խօսք չեմ տռել, որովհետեւ Մոսկվայից լուր շունեմ:

«Խամսայի Մէլիքութիւնները» կոչված պատմական աշխատութիւնը առանձին, զրքով լոյս տեսաւ. մի օրինակ ուղարկել էի Զեզ «Դարարաղի Աստղագէտը» նոյնպէս առանձին զրքով լոյս կը տեսնի ներկայ ամսում: Այդ երկու դրեսը միմեանց հետ ներբին կապ ունեն, վերաբերում են Դարարաղի հայկական իշխանութիւններին, մէկը որպէս պատմութիւն, միւսը որպէս վէտ:

✓ Զեմ կարող առանց վրդովմունքի յիշել մեր անշնորհակալ հասարակութեան անտարբերութիւնը «Խամսայի Մէլիքութիւնները» զրքի վերաբերութեամբ: Այդ զիրքը իմ բոլոր զրքերի պսակը ոլէտք է համարել. ես զրանով կննդանացրի մի վաղուց կորած և մոռացված պատմութիւն: Ես զրանով ապացուցի, որ հայկական իշխանութիւնը շարունակվում էր մինչեւ ներկայ դարը: Դա մեծ բան է: Բայց փոխանակ հասարակութիւնից խրախուսանք և քաջալերութիւն դանելու, ամեն կողմից դանգասներ եմ լսում՝ «զինը թանգէք նշանակել»...

Եւ այդ ասում են այն մարդիկը, որ իրանց քէֆերի համար հազարներ են վատնում: Ոչ ոք չէ մոածում, որ հեղինակը ճանա-

պարհորդել է, ծախսեր է արել, նիւթեր է հաւաքել, թէ իր առողջութիւնը, թէ իր կոսէ կուրը վատնել է, մինչև կարողացել է մի այսպիսի պատմութիւն ի լոյս ընծայել,

Ես մեր հասարակութեան սառնարտութեան վրա ուշադրութիւն չեմ դարձնի, կը շարունակեմ աշխատել, միայն ինձ շատ երջանիկ կը համարէի, եթէ քանի կենդանի եմ, իմ բոլոր հեղինակութիւնները սպազած կը տեսնէի: Առողջութիւնս արդէն սկսել է քայլայինի: Ելուրծքիս հիւանդութիւնը այս աշուն աւելի սաստկացած է. կենսական ուժերս օր ըստ օրէ սպառվում են... ճանապարհորդութիւնը բաւական կազմուրում է ինձ, բայց այս ամառ որքան ցանկացայ դէսլի վանի կողմերը գնալ. Հը կարողացայ, պատճառները կարող էք նախադուշակել...

Ենդունեցէք իմ խորին յարգանքը

Յ. Մելիք-Յակոբեան.

Յ. Գ. Ես մտածում եմ Ռուսաստանի գոնէ զիխաւոր հայաբնակ քաղաքներում ունենալ մի-մի մարդ, որ յանձն առնէին իմ զիրքը վաճառելու, ի հարկէ, ստանալով միենոյն Ժամանակ տօկոս իրանց աշխատութեան համար: Այդ նրա համար է, որ ես, ուղիղը խոստովանեմ Զեղ, սաստիկ խզճահարւում եմ, երբ զանազան ծանոթներին և բարեկամներին ձանձրացնում եմ, յանձնելով նրանց իմ զրքերը վաճառել: Ինձ յայտնի է, թէ որքան դժուար է հայերի մէջ զիրք տարածելը: Բայց առանձին մարդիկ իրանց օդուի համար կաշխատեն տարածել:

Ես արդէն մի քանի քաղաքներում ունեմ այսպիսի մարդիկ, ցանկանում եմ, որ մէկն էլ Մոսկվայում լինի: Դուք, յոյս ունեմ, այդքան նեղութիւն յանձն կտոնեք, որ դանէք Մոսկվայում մի անձնաւորութիւն, որին ես վստահանայի իմ զրքերը ուղարկելու: Նա կախում կունենար Զեղանից, և Դուք զրքերը նրան յանձնելով, նրանից հաշիւ և փող կստանայիք: յետոյ կուղարկէիք ինձ:

Եթէ ամեն տեղ կանոնաւոր կերպով իմ հրատարակութիւնները վաճառվնեն, ես միջոց կունենամ իմ մենացած հեղինակութիւնները հետզետէ տպագրելու: Գրավաճառների վրա յոյս զնել չէ կարելի, ալէտք է ամեն տեղ սեղական մարդիկ ունենու: Ես «Դաւիթ Բէկի» 111 զրքի վաճառելու իրաւոնքը տուի անդունքս «Ելենարօնական» զրավաճառանոցին: բայց այն չը կարողացան անել, ինչ որ ես սպասում էի:

Իմ բարեկամներին, կրկնում եմ Զեղ, չեմ ուզում ձանձրացնել, աւելի լաւ է, որ զրքերից զոյսցած զումարից մի որոշեալ մասը վճարեմ առանձին մարդիկների, քան զրան և նրան նեղութիւն պատճառեմ:

Յուսով եմ, որ այդ մասին Զեր կարծիքը կը յայտնէք ինձ:
Զեր Յ. Մելիք-Յակոբեան.

11.

Թիֆլիս, 1882 ամ. 6 նոյեմբ.

Յարկելի բարեկամ

Մեկը պատագարիչ.

Հեր վերջին երկու համակենքը ստացել եմ. Հորբակալ և Զեր բարեսրտութեան համար. որ դարձեալ Զեր վրա էք ընդունուել իմ զրքերը տարածելու ձայնութիւնը. որը Զեր բազմահազ զրադմաւնքների մէջ հարկաւ շատ զգայի ոլէաք է լինի.

«Դաւիթ Բէկի» առաջին հատորը Թիֆլիսում վազուց սպառված է. ինձ մօտ նոյնպէս զի մեացել. աւելի լաւ կանչք. որ մեացած օրինակները յետ ուղարկեք. որովհետեւ շատ պահանջողներ կան:

Մինչև Զեր համակը ստանալը արտէն փոստով յուղարկեած էի Զեր անունով 30-օրինակ «Դաւիթ Բէկի» երկրորդ հատորից, մտածելով. որ առաջին հատորը բոլորը վաճառված է և առաջինի դնողները հարկաւ երկրորդն էլ կանեն:

Այստայի Մէլիքութիւնները զրքից ուղարկեցի հ0-օրինակ. այդքանից թէ Մոսկավի համար շատ է, բայց կը պահեք Զեղ մօտ, կամաց-կամաց կը ծախովի. իմ միւս աշխատութիւններից «Անոթը» չէ մեացել. իսկ «Փռունջի» հատորներից կուղարկեամ իւրաքանչիւրից 10-օրինակ. իսկ «Դարաբաղի Աստղագետը» առանձին զրքով լոյս կը տեսնի մի շարաթից յետոյ: Զը զիտեմ, ինչ տպաւորութիւն զործեց Մոսկավի ընթերցողների վրա այդ վեպը. Դրանից առաջին անգամ կուղարկեամ Զեղ 10-օրինակ և ոչ աւելի:

Զեր զանգատը այստեղի Հայոց տպագրական ընկերութեան անհոգութեան վերաբերութեամբ բոլորովին իրաւացի է: Երէկ պ. Թաւատեանցին տեսայ. որը բնկերութեան դանձապահն է. նա տսաց, թէ Զեր համակների պատասխանը ժամանակին զրկել են, և զարմանում է. թէ ինչպէս է պատահել. որ չէք ստացել, և խոստացաւ, որ Նորից համար պիտի զրեն Զեղ:

Տէր Խորայէկեանցը «Անտրօնական զրավաճառանոցի» գործակատարներից մէկն է, կարծեմ, զրավաճառանոցի բնկերութեան մէջ մասն էլ ունէ. Նրա զրութիւնների վրա կարող եք վստահանալ:

Պարոն Արախոսնեանցի հետ յաճախ տեսնվում եմ, երբեմն ոլ. Արծրունու մօտ ձաշի է զալիս. ևս էլ այնտեղ եմ լինում: Շատ պատուական երիտասարդ է. նա Թիֆլիսում յաջողութիւն կը դանէ. խոստացել են այստեղի բանկերից մէկի մէջ պաշտօն տալ: Բացի որանից, զիտաւորութիւն ունի մի շարք գտածախօսութիւններ երադակաւ իր մասնագիտութիւնից. այդ աւելի կը նպաստէ նրա յառաջադիմութեանը:

Պ. Նիկողոսնանցի մասին բաւական ժամանակ է ոչինչ տեղե-

կութիւն չունեմ Նա իր այսասութիւնների մասին մի անդամ ինձ
էլ զրած էր, բայց և ինչ կարող էի անել. հայկական առածը ա-
սում է՝ «քաշալը զեղ գիտենայ, առաջ իր դիխին կանէ...»

Պարոն Շահազիզիանցի նամակը ստացել եմ. Հնորհակալ եմ
նրա ուշադրութեան համար, չուտով պատասխանը կը գրեմ:

Ընդունեցէք իմ խորին յարդանքը

Յ. ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ.

12.

ԹԻՖԼԻՍ. 1883 ամ. 1 փետրվարի:

Յարզելի բարեկամ

ՄԵԼՔՈՅ ԿԱՍՊԱՐԻՉ,

Զեր նամակը ստացայ. Անոկի աքաղաղից», որպէս պահանջել
էք, մի քանի հատ դարձեալ կուղարկեմ Զեզ:

«Եայծերի» վերջին թերթը այսօր կը տպվի. Աստումծ ազատէ
այստեղի տպարաններից, բաւական ժամանակ ուշացրին. Մինչեւ
ներկայ ամսի 15-ը գիրքը պատրաստ կը լինի:

«Եաչաղողի յիշատակարանը» նոյնպէս առանձին դրբով տըստ-
վում է. Յանկալի էք գիտենալ, թէ Մուկովայի ընթերցողների վրա
ինչ տպաւորութիւն է դործում այս աշխատութիւնը:

Ներեցէք, յարզելի բարեկամ, որ ևս խիստ սակաւ անդամ եմ
նամակներ զրում Զեզ. Եթէ Զեզ յայտնի լինէին իմ ծանր և ան-
ընդհատ աշխատութիւնները, Դուք աւելի ներողամիտ կը լինէիք
զէսի մի մարդ, որ ամեննեին օգնական չունի, և ստիպված է ամեն
դորձ իր ձեռքով կատարել:

Ընդունեցէք իմ խորին յարդանքը.

Յ. ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ.

Աղջունեցէք, խնդրեմ, ալ. Շահազիզեանին, ևս նրան էլ ոլար-
տական եմ. Նրա վերջին նամակի պատասխանը դեռ չեմ գրել:

13.

ԹԻՖԼԻՍ. 26 փետրվարի 1883 ամ.

Յարզելի բարեկամ,

Փօստով ուղարկվեցաւ Զեր անուամբ գրքերի երկու կապոց.
70 օրինակ ակայծերի» առաջին հատորից, 50-օր. Անոկի Աքաղաղը:

«Էլայծերից» նուէրներ են ուղարկված հետեւեալ անձինքներին
մի-մի հատ —

- | | |
|----------------------------|---------------|
| 1. Ռւսանովների զրադարանին: | |
| 2. Մկրտիչ էմբին: | Գրքերի վրա իմ |
| 3. Ա. Շահազիզեանցին: | մակագրութիւնը |
| 4. Արևելեանցին: | կայ: |
| 5. Զեզ: | |

Յուսով եմ, որ Դուք կը հաւանէք «Էլայծերի» թէ զիրքը և թէ
տպագրութեան մաքրութիւնը։ Այդ զիրքը այստեղ մեծ հետաքր-
քրութեամբ կարդացվում է և բաւական վաճառվում է։

Արդէն պատրաստ է «Էլաչազողի Յիշատակարանի» I և II
մասները առանձին զրքով։ իսկ այդ աշխատութեան III և IV մաս-
ները նոյնպէս առանձին զրքով կարտառվի «Մշակից»։ «Կայծերի»
III հատորը կը ապօի այս տարի նոյնպէս ալ. Ա. Մելիք-Հայկազեանի
ծախքով։

Ընդունեցէք իմ խորին յարդանքը.

8. Մելիք-Յակոբեան.

14.

Թիֆլիս, 3 Մայիսի 1883 ամ.

Յարգելի բարեկամ,

Չեր ուղարկած փողերը թէ վաճառված զրքերից և թէ «Էլայ-
ծերի» բաժանորդների մասին բոլորը ստացել եմ։ Պարսն Արծրու-
նին նոյնպէս ստացել է «Մշակի» բաժանորդագինը։ Ներեցէք, որ
այսքան ժամանակ չը պատասխանացինք։

Շատապում եմ յայտնել Չեզ մի շատ տիտր լուր. ամսոյս 1-ին
ալ. Արծրունու բնակարանը և «Մշակի» խմբագրատունը խուղար-
կութեան ենթարկվեցան, որը տեսեց երեք օր։ Խուղարկողներն էին,
բայց ոստիկանութիւնից, նահանգական դատարանի պրօկուրորը և
մի ժանդարմի գնդապետ Բոլոր թղթերը, ինչ որ կարողացան զբա-
նել, թէ ալ. Արծրունու բնակարանի մէջ և թէ խմբագրատան մէջ։
զրաւեցին։

Յայտնի չէ, թէ ինչ նպատակով կատարվեցաւ այդ խուղար-
կութիւնը. անպատճառ մատնութեան գործ է, և գուցէ մի որ և իցէ
հայի մատը խառնված է այդ գործի մէջ։ Բայց ևս վստահ եմ, որ
տարած թղթերի մէջ չեն կարող գտնել այնպիսիները, որ ալ. Արծ-
րունու անձնաւորութիւնը կասկածելի դարձնէին։ Ես իբրև նրա
շատ մօտ բարեկամ զիտեմ, որ նա երբէք կասկածաւոր անձանց
հետ յարաբերութիւններ չէ ունեցել։ Երա զործունէութիւնը եղել

է բուն ազգային, և դրա մեջ ևս կառավարութեան որոշած սահմաններից չէ անցել։ Այն բոլորը, ինչ որ կատարել է նա Տաճկատանի հայոց վերաբերութեամբ, կառավարութիւնից ծածռել չեն։

Չը զիտեմ ինչով կը վերջանայ այդ փորձանքը. չը զիտեմ նաև, թէ արդեօք «Մշակու» հրատարակութիւնը կը խափանեն, թէ ոչ Բայց ինչ էլ որ լինի, «Մշակու» զուցէ մի քանի շարաթ հրատարակիւն չէ կարող, որովհետեւ խմբագրատան բոլոր նիւթերը տարել են, մի թղթի պատառ անզամ չեն թուզել։

Այժմ սկսել են սաստիկ ուշադրութիւն դարձնել հայերի վրա Երեանում 22 նշանաւոր երիտասարդների աներում խուզարկութիւն է կատարվել. բոլորին էլ ոստիկանութեան հակողութեան ներքոյ ևն դրել. մեկը բանտարկված է։ Շարժառիթները չնշին են. միայն լուից ուզու ևն շինում և չնշին գործերին քաղաքական կերպարանք տալիս «Պատկ» լրադիրը խափանված է։

Պարոն Արծրունին կալանաւորված չէ։ Մեղանից առն մեկը ժամէ ժամ սպասում է. որ ժանդարմենները կը մաննեն իր բնակարանը։ Ասում են, մի քանի հայոց աներում ևս այէտք է խուզարկութիւննեն լինեն. ի՞նչպէս կը վերջանայ այդ բոլորը, զժուար է նախադուշակել։ Սաստիկ յուսահատութեան մէջ ենք։

Այսանդ մի խումբ, որի պարագլուխն է «Մեղութ» խմբադիրը, աշխատում են, որ Մակարի կաթողիկոս լինելը յաջողեցնեն։ Մի քանի խումբեր ևս Ներսէսի¹⁾ համար են աշխատում Յայտնի չէ. թէ կառավարութիւնը որ առահճան համարում ունի Մակարի վրա Բայց նրա կուսակիցները ամեն տեղ տարածում են թէ նա կառավարութեան կանոնիդան է։ Եթէ Մակարի կաթողիկոս ընտրվելը յաջողեցնեն (որին ես չեմ հաւատում), այն Ժամանակ էջմիածինը կատարեալ աւազականոց կը դասնայ. Մանեկունուց աւելի վատ մարդիկ կը մտնեն այնտեղ։

Կաթողիկոսական աթոռին արժանի մենք միայն մէկ մարդ ունենք, և դա Ներսէսն է։ Ամեն մի ազնիւ հայի պարտըն է նրա համար աշխատել։

Ուղունեցէք իմ խորին յարկանքը։

Յ. Մելիք-Ցակոբեան։

Յ. ՏԵՐ-ՑԱԿՈՅՔԵԱՆ.

1) Խօսքը Վարժապետեան Արքազանի մասին է։ Յ. Տ. Ց.